ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«02» փետրվարի 2024 թ.

№ 3-Ա

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ +(374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Որոշման ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը.**

Երևանի քաղաքապետարանի և «ԼԵԴԱՐՄ» ՍՊ ընկերության 16.08.2023 թվականին կնքված «հ. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/55» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված վարչական սարքավորումները (խելացի թռչող սարքի բաղկացուցիչ սարքավորումներ), (այսուհետև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը վաճառողի կողմից չի իրականացվել:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը՝ իր 01.11.2023թ. հ. 34/199531-23 և 06.11.2023թ. հ. 34/202468 գրություններով առաջարկել է սեղմ ժամկետներում կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն դրանց պահանջները չեն կատարվել, հետևաբար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի հիմքով հրաժարվել է «ԼԵԴԱՐՄ» ՍՊ ընկերության հետ 02.08.2023 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/55» ծածկագրով գնման պայմանագրից և միակողմանի /լրիվ/ լուծել է հ. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/55» ծածկագրով գնման պայմանագիրը, որը 31.01.2024 թականին հրապարակվել է www.gnumner.am կայքում:

2. **Որոշումն ընդունելու հիմնավորումը.**

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում...»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԼԵԴԱՐՄ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:
3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ

02 փետրվարի, 2024թ.
Երևան